ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի մարտի 26-ին կնքված ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-21/Ֆ-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան «31» մարտի 2021թ.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս ռեկտոր Դ. Գալոյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Գ. Մարգարյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի բ. ենթակետի, Պատվիրատուի և Կատարողի միջև 2021 թվականի մարտի 26-ին կնքված ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-21/Ֆ-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերի երկկողմանի համաձայնությամբ որոշեցին 2021 թվականի մարտի 26-ին կնքված ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-21/Ֆ-1 ծածկագրով պայմանագրում (Միջոցառումների հետ կապված ծառայություններ) կատարել փոփոխություն՝ համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի բ. ենթակետի:

1.2 Պայմանագրի ընդհանուր գինը փոփոխությունից հետո կկազմի 197,340 (Մեկ հարյուր իննսունյոթ հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 128	Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բուռնազյան 7
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ	«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
900018001876	Հ/Հ 220533332767000
ՀՎՀՀ՝ 01503224	ՀՎՀՀ 00851011
Ռեկտոր _____ Դ. Գալոյան	Տնօրեն _____ Գ. Մարգարյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ